Հավելված
Ախուրյանի « Այգաբաց մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի
2024թվականի մայիսի 7-ի N 21-Լ հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի «Այգաբաց մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հոգեբանի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

| N | **Թափուր պաշտոնի անվանումը** | **Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները)** | **Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝** | **Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը** |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի «Այգաբաց մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 1.հոգեբան-0.5 դրույք | **Որակավորման պահանջները**<br>Նախադպրոցական ուսումնական հաստատության հոգեբանի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝ բարձրագույն մասնագիտական կրթություն:<br>**Ընդհանրական պահանջները**<br>*Նախադպրոցական ուսումնական հաստատության հոգեբանի պաշտոնը զբաղեցնողը պետք է՝*<br>1) տիրապետի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկայով աշխատելու հմտություններին.<br>2) իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին, կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝<br>ա. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», | **Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը,** որը՝<br>1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.<br>2)դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.<br>3)տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը.<br>4)դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը սահմանված | 1)դիմում Ձև1)<br>2)անձը հաստատող փաստաթուղթ.<br>3)կրթության մասին փաստաթուղթ<br>4)աշխատանքային ստաժի մասին տեղեկանք<br>5)ինքնակենսագրություն ձև4<br>6)մեկ լուսանկար՝ 3×4չափի.<br>7)այլ պետությունների քաղաքացիները՝Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ.<br>8)Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | «Նախադպրոցական կրթության մասի», «Լեզվի մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Լիցենզավորման մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը, «Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնա-դրությունը»,Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի համապատասխան նորմատիվ իրավական ակտերը.<br>բ. ընդհանուր և մանկավարժական հոգեբանության, ընդհանուր մանկավարժության, անձի և դիֆերենցիալ հոգեբանության, տարիքային և մանկան հոգեբանության, սոցիալական հոգեբանության հիմունքները. | կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար: | զինվորական կցագրման վկայական.<br>9)հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(դրանց առկայության դեպքում): |
| | | **Նախադպրոցական ուսումնական հաստատության հոգեբանի թափուր պաշտոնի մրցույթի մասնակիցների՝ 3-րդ սյունակի 1-ին կետով նախատեսված պահանջները հավասարապես բավարարելու դեպքում մրցութային հանձնաժողովի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու մասին որոշում կայացնելիս կարող են հաշվի առնվել նաև 2-րդ կետով նշված լրացուցիչ պահանջները:** | | **Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2 | Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը | Դիմումների և փաստաթղթերի ընդունումը | | Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները |
| | Վայրը՝ ՀՀՇՄ Ախուրյան համայնքի Այգաբաց բնակավայրի փողոց 9, 36շենք, Այգաբաց մանկապարտեզ: Օրը՝2024թվականի հունիսի 7-ին ժամը՝11:00 | Փաստաթղթերը ներկայացնելու,լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել ՀՀՇՄ Ախուրյան համայնքի Այգաբաց բնակավայրի 9 փողոց, 36 շենք<br>Հեռ՝ 094078363<br>Հարցաշարերը տեղադրված են Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «25» մարտի 2022թվականիN471-Ա/2 հրաման: | | 2024թվականի մայիսի 7-ից հունիսի 5-ը ներառյալ |
| | | Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր,ժամը 09:00-17:00, բացի շաբաթ և կիրակի | | |